ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ-ն ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
3	Գրասենյակային պահարան՝ ապակեպատ և փակ բաժանմունքներով, նախատեսված գրասենյակային փաստաթղթերի, թղթապանակների և այլ պարագաների պահպանման համար: Կառուցվածքը՝ երկհատված պահարան՝ վերին ապակեպատ և ստորին փակ բաժանմունքներով: Չափերը՝ • Լայնությունը՝ 800 մմ: • Բարձրությունը՝ 1800 մմ: • Խորությունը՝ 450 մմ: Նյութը՝ լամինացված փայտատաշեղային սալ (ԼՓՏՍ, ДСП)՝ 18 մմ հաստությամբ: Պահարանի իրանը, կողապատերը, վերին և ստորին հորիզոնական հատվածները, դարակները և ստորին դռները՝ նույն նյութից: Վերին բաժանմունքը՝ 3 հորիզոնական դարակով, երկու բացվող ապակեպատ դռներով: Դռները՝ շրջանակավոր, լամինացված փայտատաշեղային սալից կամ միջին խտության փայտաթելային սալից (MDF) պատրաստված շրջանակներով: Ապակեպատ դռները՝ շրջանակների մեջ ամրացված ապակիներով (ապակու հաստությունը՝ 5 մմ), առանց ճաքերի, կոտրվածքների և սուր եզրերի, հուսալի ամրացմամբ: Ստորին բաժանմունքը՝ երկու բացվող դռներով, ներսում՝ 2 հորիզոնական դարակով: Դռները՝ լամինացված փայտատաշեղային սալից, բանալիով փակվող փականով: Դարակները՝ հորիզոնական, գրասենյակային փաստաթղթերի և պարագաների տեղադրման համար նախատեսված, ամուր ամրացմամբ: Դռների կցամասերը՝ մետաղական ծխնիներով և բռնակներով, սահուն բացման և փակման հնարավորությամբ: Փականը՝ ստորին բաժանմունքի դռների բանալիով փակման մեխանիզմով, դռների փակ վիճակում հուսալի ամրացմամբ: Եզրապատումը՝ բոլոր տեսանելի եզրերը և անկյունները՝ հարվածների, խոնավության և առօրյա մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմացկուն պոլիվինիլքլորիդե (ՊՎՔ/PVC) եզրաժապավենով պատված, առանց սուր

	եզրերի և շերտազատումների: Հետնապատը՝ փայտաթելային սալից (ԴՎՊ), պահարանի իրանին ամուր ամրացմամբ: Հատակին հպվող հատվածները՝ պլաստիկե կամ ռետինե պաշտպանիչ ներդիրներով՝ հատակի մակերեսի քերծվածքները և վնասվածքները կանխելու համար: Կայունությունը՝ ամուր և կայուն կառուցվածքով, առանց ճոճման և շահագործման ընթացքում առաջացող բեռնվածքներից դեֆորմացվելու: պատին ամրացնելու հնարավորությամբ: Արտաքին տեսքը՝ հարթ, միատեսակ մակերեսներով, առանց ճաքերի, քերծվածքների, շերտազատումների և այլ տեսանելի վնասվածքների: Գույնը՝ դարչնագույն կամ մոկկո կամ բեժ (երանգները և նախշերը համաձայնեցնելով Պատվիրատուի հետ) Ընդհանուր պահանջները՝ նոր, չօգտագործված, հավաքման և շահագործման համար անհրաժեշտ բոլոր կցամասերով, ամրակներով և պարագաներով: Մատակարարման պայմանները՝ ապրանքի մատակարարումը, բեռնաթափումը, հավաքումը (եթե ապրանքը ունի հավաքման կարիք) և տեղադրումը համապատասխան սենյակում կամ պահեստում, ինչպես նաև կարգաբերումները իրականացվում է Վաճառողի ուժերով և իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 365օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Армен Рафаелян Румелович ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
3	